ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N3, 2022

Հիմնաբառեր. *սահմանի բացում, ագրարային ոլորտ, զարգացում, երկկողմանի առևտուր, էքսպանսիա, մրցակցություն*

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը ՀՀ արտաքին քաղաքականության ամենանուրբ ու վիճահարույց խնդիրն է: Առավել ևս հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմից հետո, երբ արծարծվում է Թուրքիայի հետ դիվանագիտական և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հարցը, հայ հանրության, ներառյալ՝ սփյուռքահայության կարծիքներն առճակատվում են: Մարդկանց առավել ազատական ու իրատես (պրագմատիկ) հատվածը կարծում է, որ թշնամական հարաբերությունները հավերժական լինել չեն կարող, իսկ զգացմունքային ու պահպանողական կողմը ժխտում է Թուրքիայի հետ փոխհարաբերությունների զարգացման նպատակահարմարությունը՝ նախընտրելով փակ սահմանի գոյությունը:

Ինչպե՞ս քանդել այս «գորդյան հանգույցը», ո՞րն է ճիշտ ընտրությունը... Իհարկե, խնդրի լուծման բանալին իշխանության ձեռքում է, սակայն որպիսին կլինի արձագանքը, անհայտ է: Որքան էլ բարդ է հիմնահարցը, այնուամենայնիվ ՀՀ իշխանությունները գործնական քայլերի են դիմում այն լուծելու համար: Այդ քայլերը վերաբերում են նաև հայ-թուրքական սահմանի բացմանը և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Այստեղ հատկապես շեշտադրվում է Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսության, մասնավորապես՝ ագրարային հատվածի էքսպանսիայի վտանգը: Պետք է խոստովանել, որ հարևան Վրաստանում, հատկապես՝ Աջարիայում, վրաց–թուրքական բաց սահմանի հետևանքները զգուշացնող են: Այդուհանդերձ, առավել հիմնավոր կարծիք ունենալու համար պետք է ուսումնասիրել Թուրքիայի մրցակցային առավելու-

թյունները և հավասարազոր տնտեսական մրցակցության առումով՝ սեփական հնարավորությունները:

Հոդվածում դիտարկվում են Թուրքիայի ագրարային ոլորտի ներուժը և բաց սահմանի ու ազատ առևտրի պայմաններում Հայաստանի համար հնարավոր ռիսկերը:

Թուրքիայի ագրարային ներուժը և մրցակցային առավելությունները

Հայաստանի սահմանակից երկրներից տնտեսական զարգացման աչքի ընկնող նվաճումներ ունի Թուրքիան: Այս երկիրն աշխարհում բնակչության թվով 19-րդն է (2021 թ.՝ 85,6 միլիոն մարդ), իսկ զբաղեցրած տարածքով՝ 36-րդը՝ 783,6 հազար ք.կմ: Թուրքիայի տարածքը գտնվում է երկու աշխարհամասում՝ Ասիայում (97%-ը) և Եվրոպայում (3%): Դրա հիմնական մասը Փոքր Ասիայի կամ Անատոլիայի թերակղզին է, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհը: Երկրի ավելի փոքր հատվածը բաժին է ընկնում Բալկանյան թերակղզուն՝ Սև և Միջերկրական ծովերի միջև: Այսինքն՝ այս երկրի վրայով են անցնում Ասիան և Եվրոպան կապող կարևոր առևտրային ուղիները:

Թուրքիան առավելապես լեռնային երկիր է, և, կախված տեղանքի բարձրությունից, այդ հանգամանքն ազդում է երկրի կլիմայի վրա: Կենտրոնական մասում կլիման բարեխառն մայրցամաքային է: Ամռանը պահպանվում են շոգ և չոր եղանակային պայմանները, մինչդեռ ձմռանը գերակշռում է բավական ցածր ջերմաստիճանը: Թուրքիայի՝ Սև ծովին ափամերձ տարածքներն աչքի են ընկնում առատ տեղումներով և մեղմ ձմեռներով: Ձմռանը օդի միջին ջերմաստիճանը մոտ +5% է, իսկ ամռանը՝ +23%, միջին տեղումները՝ տարեկան 100-2500 մմ: Հարավ-արևելքում կլիման արևադարձային է, անապատային:

Այսպիսի բարենպաստ աշխարհագրական դիրքն էականորեն նպաստել է երկրի տնտեսության, հատկապես՝ ագրոպարենային ոլորտի և արտաքին առևտրի զարգացմանը: Ներկայում, ըստ ԱՄՀ-ի, Թուրքիայի տնտեսությունն աշխարհում 11-րդն է, իսկ Եվրոպայում՝ 4-րդը[1]: Ի դեպ, Թուրքիայի գյուղատնտեսության ոլորտի աճը 2020 թ.-ին հասել է 4,8%-ի, որը վերջին երեք տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Թուրքիայի գյուղատնտեսության և անտառային տնտեսության նախարար Բեքիր Փաքդեմիրլն այս առիթով նշել է. «Չնայած նոր տեսակի կորոնավիրուսի բռնկմանը և երաշտին՝ գյուղատնտեսության ոլորտը շարունակում է աճել ու զարգանալ նվիրյալ աշխատանքի շնորհիվ: Գյուղատնտեսության ոլորտի միջին տարեկան աճը վերջին 20 տարում կազմել է 2,8%, իսկ վերջին 3 տարիների ընթացքում մենք այդ ցուցանիշը հասցրել ենք 3,5%-ի: Մեր գյուղատնտեսական և պարենային ապրանքների արտահանումը 2020 թվականին հասել է 20,7 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ 5 տոկոսով ավելի, քան նախորդ տարի»[2]:

2021 թվականին Թուրքիայի տնտեսությունն աճել է 11 տոկոսով, որն ամենաբարձր ցուցանիշն է G20 երկրներում, քանի որ COVID-19-ի հետ կապված միջոցառումներն աստիճանաբար մեղմացվել են, իսկ իշխանությունները թուլացրել են դրամավարկային քաղաքականությունը: Լիրան նույն թվականի դեկտեմբերի 20-ին արժեզրկվել էր մինչև ռեկորդային ցածր մակարդակի (18.00 լիրա՝ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց), իսկ գնաճը մարտին հասել էր ռեկորդային առավելագույնի՝ 61.1 տոկոս[3]: Բացի այդ, ռուս-ուկրաինական պատերազմը սրում է թուրքական տնտեսության առջև ծառացած հիմնախնդիրները: Ակնկալվում է, որ պատերազմը կխաթարի Թուրքիայի էներգետիկ, գյուղատնտեսական, զբոսաշրջության և օտարերկրյա կապիտալ շինարարության ոլորտները, և հիմնական ապրանքների ներմուծման գների աճն ուղղակիորեն կազդի ընթացիկ հաշվի մնացորդի ու գնաճի վրա: Այդուհանդերձ, անառարկելի է, որ Թուրքիան ունի բավական մեծ տնտեսական ներուժ և զարգանում է արագ տեմպերով:

[1] https://www.apk-inform.com/ru/exclusive/topic/1526722
[2] https://regnum.ru/news/economy/3206921.html
[3] https://www.worldbank.org/en/country/turkey/overview#1

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Թուրքիայի տնտեսական աճն ըստ տարիների և եռամսյակների (2010-2021 թթ.)

Տարի	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
2010	6,9	8,1	8,7	9,7	8,4
2011	11,8	11,5	11,6	10	11,2
2012	6,7	5,0	3,6	4,2	4,8
2013	8,4	9,7	8,9	7	8,5
2014	8,6	2,8	3,4	5,5	4,9
2015	3,5	7,2	5,7	7,6	6,1
2016	4,9	5	-0,7	4,4	3,3
2017	5,3	5,3	11,8	7,3	7,5
2018	7,5	5,8	2,5	-2,6	3
2019	-2,5	-1,6	1	6	0,9
2020	4,4	-10,4	6,3	6,2	1,8
2021	7,3	21,9	7,5	9,1	11

Ահավասիկ, Թուրքիայի վիճակագրության ինստիտուտի (TÜİK) տվյալներով, այս երկրի որոշակիորեն կայուն տնտեսական աճի մասին է վկայում 2010 թվականից ի վեր ներկայացվող ցուցանիշների շարժընթացը (աղյուսակ 1): Ինչպես նկատելի է՝ դիտարկվող տարիներին տնտեսական աճի ամենաբարձր ցուցանիշներ գրանցվել են 2011 և 2021 թվականներին[4]:

Թուրքիան արտահանման ոլորտում պատմական հաջողությունների է հասել հատկապես 2021 թվականին: Երկրի արտահանման ցուցանիշը պատմության մեջ առաջին անգամ գերազանցել է 200 միլիարդ ԱՄՆ դոլարի նշագիծը և հասել 225,4 միլիարդ ԱՄՆ դոլարի: Այս մասին վկայում է Trend պարբերականը՝ վկայակոչելով Թուրքիայի առևտրի նախարար Մեհմեդ Մուշի դիտարկումները: Նախարարի հավաստիացմամբ՝ 2021 թվականին, 2002 թվականի համեմատությամբ, Թուրքիայի արտահանումն ավելացել է ավելի քան վեց անգամ: Այսինքն՝ 2021 թվականին Թուրքիայի արտաքին առևտրի ծավալը մոտեցել է 500 միլիարդ ԱՄՆ դոլարի: Արտաքին առևտրի պակասուրդը նվազել է 7,8 տոկոսով և կազմել 45,9 մլրդ ԱՄՆ դոլար: Արտահանման և ներմուծման հարաբերակցությունը կազմել է 83 տոկոս: 32000 նոր արտահանող ընկերություններ են շուկայահանել իրենց արտադրանքը, և թուրքական արտադրության արտադրանքն առաջին անգամ մուտք է գործել 123 երկրների վաճառասրահներ[5]:

Ներկայում Թուրքիայի արտահանումը ներկայացված է այնպիսի ապրանքախմբերով, ինչպիսիք են տրանսպորտը (13%), սարքավորումները (16%), գունավոր մետաղները (5,2%), տեքստիլը (5%), պլաստմասսան (4,1%), թանկարժեք մետաղները, քարերը, ապրանքները (3,9%), սև մետաղներից արտադրանքը (3,75%), մրգերը և ընկուզեղենը (2,8%): Թուրքիայից ապրանքներ ներկրող առանցքային երկրներն են Գերմանիան (9,41%), Մեծ Բրիտանիան (6,62%), ԱՄՆ-ը (6%), Իրաքը (5,38%), Իտալիան (4,76%), Ֆրանսիան (4,24%), Իսպանիան (3,94%), Նիդեռլանդները (3,06%), Իսրայելը (2,77%) և Ռուսաստանը (2,65%): Դրա հետ մեկտեղ, Թուրքիա ապրանքների ներմուծումը բաղկացած է հետևյալ ապրանքախմբերից՝ վառելիք, նավթ (13,1%), մարգարիտներ, թանկարժեք քարեր, մետաղներ և մետաղական իրեր (12,1%), սարքավորումներ և մեխանիկական մասեր (16%), ցամաքային տրանսպորտ (7%), սև մետաղներ (6.8%), պլաստմասսա (5.3%), օրգանական քիմիկատներ (2.7%), դեղագործական արտադրանք (2.2%): Թուրքիային ապրանքներ մատակարարող առանցքային երկրներից կարելի է առանձնացնել Չինաստանը (10.4%),

[4] https://www.aa.com.tr/ru/%D1%8D%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BA%D0%B0/%D1%80%D0%BE%D1%81%D1%82-%D0%B2%D0%B2%D0%BF-%D1%82%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D0%B8-%D0%B2--2021-%D0%B3%D0%BE%D0%B4%D1%83-%D1%81%D0%BE%D1%81%D1%82%D0%B0%D0%B2%D0%B8%D0%BB-11-/2517641

[5] https://www.aa.com.tr/en/economy/turkiye-sees-record-exports-in-2021/2464001

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Թուրքական պարենային ապրանքների տեղն ու մասնաբաժինն աշխարհում*

Ապրանքի անվանումը	Տեղն աշխարհում	Համաշխարհային արտադրության մասնաբաժինը, %	Արտադրության ծավալը, մլն տոննա
Ցորեն	11	2.09	16.25
Եգիպտացորեն	17	0.54	6.5
Գարի	8	3.09	4.5
Բրինձ	44	0.11	0.54
Տարեկան	6	2.63	0.33
Վարսակ	14	11	0.25
Արևածաղիկ	6	3.06	1.75
Բամբակ	8	2.85	1.24
Սոյա	26	0.03	0.11
Արևածաղկի յուղ	5	5.32	1.17
Սոյայի յուղ	21	0.44	0.27
Ձիթապտղի յուղ	3	7.61	0.25

**Աղբյուրը՝ USDA:*

Գերմանիան (9.9%), Ռուսաստանը (8.1%), ԱՄՆ-ը (5.2%), Իտալիան (4.2%), Իրաքը (3.7%), Շվեյցարիան (3,5%), Ֆրանսիան (3,2%), Հարավային Կորեան (2,6%):

Թուրքիայի արտաքին առևտրում առանձին տեղ պետք է հատկացնել ԵՄ-ին: Թուրքիան Եվրամիության հետ մաքսային միության մեջ մտավ 1995 թվականի դեկտեմբերի 31-ին, ըստ որի՝ վերացվեցին առևտրի մաքսատուրքերը և քվոտաները, ինչպես նաև թուրք արտահանողներին երաշխավորվեց մուտք դեպի ԵՄ շուկա: Հատկապես գյուղմթերքի առևտուրը կարգավորվում է կողմերի միջև արտոնությունների համակարգի շրջանակում: Ինտեգրման նման բարձր մակարդակի շնորհիվ՝ զգալիորեն ամրապնդվել են Թուրքիա-ԵՄ հարաբերությունները, որի արդյունքում կողմերի միջև առևտրի ծավալը 1996 թվականի 33 միլիարդ ԱՄՆ դոլարից 2021 թվականին աճել է մինչև 178,6 միլիարդ ԱՄՆ դոլար: 2021 թվականին թուրքական ապրանքների արտահանումը ԵՄ կազմել է 93 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ ԵՄ-ից ներմուծումը ՝ 85 միլիարդ ԱՄՆ դոլար:

Թուրքիան ունի պարենային արտադրանքների արտադրության և արտահանման բավական մեծ ներուժ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ Թուրքիայի հացահատիկային համալիրը բնութագրվում է ցորենի, եգիպտացորենի, գարու, բրնձի, տարեկանի և վարսակի արտադրությամբ: Ցանքատարածությունների կրճատման, ինչպես նաև անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով Թուրքիայում ցորենի բերքը 2021-2022 թվականներին կազմել է ընդամենը 15,5 միլիոն տոննա: Մինչդեռ երկրում ցորենի տարեկան սպառումը գերազանցում է 25 միլիոն տոննան: Հացահատիկն օգտագործվում է սերմացուի համար, ինչպես նաև վերամշակվում ալյուրի՝ ներքին սպառման և արտահանման նպատակով: Արտահանումը կազմում է տարեկան մոտ 3 միլիոն տոննա, ինչը Թուրքիան դարձնում է աշխարհում ալյուրի առաջատար մատակարար: Բացի այդ, երկիրը տարեկան արտահանում է մոտ 1,5 մլն տոննա մակարոնեղեն և այս բնագավառում Իտալիայից հետո երկրորդ տեղում է: Ուստի 2021-2022 սեզոնին Թուրքիան պետք է ներկրի առնվազն 10 մլն տոննա ցորեն:

Գարու համախառն բերքը 2021-2022 թվականներին գնահատվում է ընդամենը 4 մլն տոննա, որը կրկնակի պակաս է ներքին պահանջարկից: Եգիպտացորենի արտադրությունը շուրջ 6,5 միլիոն տոննա է, իսկ ներքին սպառումը՝ մոտ 8,5 միլիոն տոննա, այսինքն՝ նախատեսվում է ներկրել գրեթե 2 մլն տոննա: Եգիպտացորենի բերքահավաքը սկսվում է հուլիսի վերջ -

օգոստոսի սկիզբ ժամանակահատվածում՝ առաջին բերքի համար և շարունակվում մինչև հունվար-փետրվար՝ երկրորդի համար: Չնայած ցորենի և գարու մշակաբույսերի զգալի կորուստներին՝ Թուրքիայի եգիպտացորենի արտադրությունը կազմում է շուրջ 6,5 միլիոն տոննա: Հացահատիկի ներքին սպառումը կազմում է մոտ 8,5 միլիոն տոննա, այսինքն՝ նախատեսվում է ներկրել գրեթե 2 մլն տոննա: Այս նկատառումներով Թուրքիայի կառավարությունը 2021 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում սահմանել է առանցքային հացահատիկային մշակաբույսերի ներմուծման զրոյական մաքսատուրք, որը նախկինում ցորենի համար 45% էր, գարու համար՝ 35%, եգիպտացորենի համար՝ 25%[6]:

Ի դեպ, հետաքրքրական է, որ Թուրքիան մեծ առավելություն է ձեռք բերել ալյուրի արտահանման շուկայում և, ներկրելով համեմատաբար էժան ցորեն, այն վերամշակում ու շահեկան պայմաններով ալյուր է արտահանում: Այսպես՝ Թուրքիան տարեկան արտահանում է միջինում մոտ 3 մլն տոննա ցորենի ալյուր՝ մնալով համաշխարհային շուկայում այս հատվածի առաջատարը: Պաշտոնական գնահատականների համաձայն՝ 2021-2022 թթ. հունիս-դեկտեմբերին արտահանվել են 1,88 մլն տոննա ցորենի ալյուր և 835 հազար տոննա մակարոնեղեն:

Այսօր իրավիճակն այնպիսին է, որ Թուրքիան շարունակում է պայքարել պարենային ապրանքների գնաճի դեմ, ինչը կապված է մի շարք գործոնների, մասնավորապես՝ երաշտի պատճառով հացահատիկային մշակաբույսերի արտադրության կրճատման, թուրքական լիրայի արժեզրկման, ապրանքների գների և արտադրության ավելի բարձր ծախսերի (պարարտանյութերի, թունաքիմիկատների, վառելիքի և էլեկտրաէներգիայի համար) հետ:

Ի հավելումն 2021 թվականի ամռանը մաքսատուրքերի իջեցմանը, Թուրքիայի նախագահը հայտարարել է, որ մինչև հաջորդ բերքահավաքը ներկրված հացահատիկը վերջնական սպառողներին վաճառվելու է զեղչով՝ երկրում գները կայունացնելու նպատակով: Իսկ ներկրումը քսան տարբեր մրցույթների միջոցով կազմել է 5,75 մլն տոննա: Այս գնումները ներառում են 2,3 մլն տոննա պարենային ցորեն (միջին 320 ԱՄՆ դոլար / տոննա CIF), 2,8 մլն տոննա գարի (միջին 305 ԱՄՆ դոլար/տոն CIF) և 650,000 տոննա եգիպտացորեն (միջին 310 ԱՄՆ դոլար /տոննա CIF): Քանի որ հացահատիկի այս պետական գնումները տեսանելի ապագայում կշարունակվեն, հացահատիկի մասնավոր առևտրականները գնալով ավելի զգուշավոր են դառնում ներմուծման հարցում: Բացի այդ, ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթի փոխարժեքի շարունակական տատանումների հավանականությունը, ներքին պահանջարկի պայմանների անորոշությունը և շուկայում կառավարության լրացուցիչ միջամտության հեռանկարներն էլ ավելի են բարդացնում իրավիճակը: Ուստի ներկրողներն ուղիներ են փնտրում այս ռիսկերը հեջավորելու համար: Ըստ շուկայի օպերատորների՝ որոշ թուրք առևտրականներ, ուղղակի ներմուծելու փոխարեն, հացահատիկ են պահում ազատ առևտրի գոտիներում գտնվող պահեստներում և այն վաճառում բորսայական առևտրի պայմաններով: Հարկ է նշել, որ հացահատիկի հիմնական ծավալները մատակարարվում են Ռուսաստանից և Ուկրաինայից: 2021-2022 թթ. առաջին կիսամյակում (2021 թ. հունիս-նոյեմբեր), ըստ Թուրքիայի վիճակագրության ինստիտուտի (TUIK), ցորենի ներմուծման ծավալը երկրում տարեկան աճել է 20%-ով և հասել 5,3 մլն տոննայի, որից 144 հազար տոննան՝ կարծր ցորենը: Դրա հետ մեկտեղ, ռուս–ուկրաինական պատերազմի, հատկապես Ուկրաինայում ծովային նավահանգիստների շրջափակման պատճառով Թուրքիա ցորենի ներմուծման ծավալը կարող է նվազել մինչև 9 միլիոն տոննա՝ նախկինում ծրագրավորված 11 միլիոն տոննայի դիմաց[7]:

Բարձր գնաճը ազդել է նաև բուսայուղի հատվածի վրա: Մասնավորապես՝ արևա-

[6] https://www.apk-inform.com/ru/exclusive/opinion/1525353
[7] Նույն տեղում:

ծաղկի ձեթի գներն աճել են տարեկան ավելի քան 60%-ով: Սա այն դեպքում, երբ պարենային ապրանքների ընդհանուր գնաճը կազմել է 30%:

Պարենային ապրանքների գնաճը նվազեցնելու նպատակով Թուրքիայի կառավարությունը մի քանի միջոցներ է ձեռնարկել: Մասնավորապես՝ Թուրքիայի հացահատիկի խորհուրդը 2021 թվականի փետրվարին անցկացված մրցույթով ներկրել է 5 հազար տոննա արևածաղկի ձեթ՝ զրոյական մաքսատուրքով, այնուհետև ներկրված ապրանքը ներքին շուկայում վաճառել ցածր գներով: Կարևոր է նշել, որ ռուս-ուկրաինական պատերազմը հանգեցրեց այս տարածաշրջանից ապրանքի մատակարարման զգալի կրճատմանը, և Թուրքիայի կառավարությունը ապրիլի կեսերին որոշեց չեղարկել բանջարեղենի ներմուծման մաքսատուրքը: Այդ որոշումը, որի մեջ մտնում է նաև արևածաղկի ձեթը, գործում է այս տարվա մայիսի 9-ից:

Արևածաղիկը Թուրքիայում յուղատու բույսերի արտադրության մեջ հիմնական բաժինն է զբաղեցնում: USDA-ի կանխատեսումների համաձայն՝ 2021-2022 թթ. երկրում արևածաղկի արտադրությունը կարող է հասնել 1,75 մլն տոննայի, ինչը 12,2%-ով ավելի է, քան 2020-2021 թթ.-ին: Այս մշակաբույսի ցանքատարածությունները, նախորդ տարվա 720 հազար հեկտարի փոխարեն, ընթացիկ տարում հասել է մինչև 760 հազար հեկտարի: Միաժամանակ, արևածաղկի բերքատվությունը գնահատվում է 2,3 տ/հա (2020-2021 թթ.՝ 2,17 տ/հա), որը, սակայն, զիջում է 2019-2020 թթ. բերքատվության ցուցանիշներին (2,4 տ/հա):

Թուրքիայում արևածաղկի սերմերի ներքին սպառումը այս սեզոնին կանխատեսվում է 2,6 միլիոն տոննա՝ 2020-2021 թվականների 2,58 միլիոն տոննայի դիմաց:

Նույն կերպ, USDA-ի վերլուծաբանները կանխատեսում են բամբակի արտադրությունը, որը 2021-2022 սեզոնին կկազմի 1,24 միլիոն տոննա՝ 2020-2021-ի 947 հազար տոննայի դիմաց:

Երկրում յուղատու բույսերի ընդհանուր արտադրության մեջ չնչին մասնաբաժին է կազմում սոյայի արտադրությունը, որի ներքին սպառման ծավալը տարեկան առնվազն 2,5 մլն տոննա է, իսկ 2021-2022 թթ. կարող է հասնել 2,62 մլն տոննայի, ինչը, սակայն, զիջում է նախորդ ժամանակահատվածի ցուցանիշին՝ 2,74 միլիոն տոննա: Ընթացիկ տարում ձեթի սերմերի համախառն բերքը կանխատեսվում է 125 հազար տոննայի մակարդակում:

Մեզ հատկապես հետաքրքրում են Թուրքիայից լոլիկի արտահանման ծավալները: Մասնավորապես՝ 2021 թվականին արտահանումը կազմել է 363 մլն 290 հազար ԱՄՆ դոլար, ինչը 16 տոկոսով ավելի է նախորդ տարվա համեմատ: Հարավարևելյան Անատոլիայի արտահանողների ասոցիացիայի տվյալներով՝ անցյալ տարի թուրքական արտադրության լոլիկը վաճառվել է աշխարհի 54 երկրում: Դա նշանակում է, որ նախորդ տարվա համեմատությամբ ներմուծող երկրների թիվն ավելացել է երեքով:

Ռուսաստանը դարձել է թուրքական լոլիկի ամենամեծ շուկան, որտեղ անցած տարի առաքվել է 68 մլն 14 հազար ԱՄՆ դոլարի արտադրանք: Ցուցակում հաջորդը Ռումինիան է՝ 58 մլն 337 հազար ԱՄՆ դոլար: Միաժամանակ, 2021 թվականին Թուրքիայից լոլիկի մատակարարման ամենամեծ աճը բաժին է ընկել Բուլղարիային: Եթե 2020 թվականին եվրոպական այս երկիր ուղարկվել է 28,8 մլն ԱՄՆ դոլարի լոլիկ, ապա 2021 թվականին այդ թիվը հասել է մոտ 41 մլն ԱՄՆ դոլարի[8]:

Թուրքիայում ոչ պակաս զարգացած են անասնաբուծական տնտեսությունները, որոնց բաժին է ընկնում երկրում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի մոտ 30%-ը: Աղյուսակ 3-ի տվյալները վերաբերում են մինչև 2018 թվականի ցուցանիշներին և ամբողջական պատկերացում են տալիս երկրի անասնաբուծության ճյուղի ներուժի մասին: Առավել նոր են ԵՄ վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Թուրքիայի վիճակագրության ինստիտուտի (TÜİK) տվյալները: Համաձայն այդ աղբյուրների՝ 2020 թվականի վերջին Թուրքիան մանր և խո-

[8] https://www.aa.com.tr/ru/%D1B0/2467847

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Թուրքիայի անասնաբուծության հիմնական արտադրական ցուցանիշները[9]

Ցուցանիշները	Տարիները						
	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, մլն գլուխ	49,7	52,9	55,6	55,9	55,4	60,2	63,1
Այդ թվում՝	13,9	14,4	14,2	14,0	14,1	15,9	17,0
խոշոր եղջերավոր	27,4	29,3	31,1	31,5	31,0	33,7	35,2
ոչխարներ	8,4	9,2	10,3	10,4	10,3	10,6	10,9
այծեր	253,7	266,1	293,8	312,3	329	342,8	353,6
ընտանի թռչուններ, մլն գլուխ, այդ թվում՝							
ածան հավեր	84,7	88,7	93,8	98,6	108,7	121,6	124,1
բրոյլերներ	169,0	177,4	200,0	213,7	220,3	221,2	229,5
Արտադրվել է՝							
կարմիր միս, մլն տ	0,9	1,0	1,0	1,1	1,2	1,1	1,1
կովի կաթ, մլն տ	17,4	18,2	18,6	18,7	18,5	20,7	22,1
թռչնի միս, մլն տ	1,7	1,8	1,9	1,9	1,9	2,1	2,2
ձու, մլրդ հատ	14,9	16,5	17,1	16,7	18,1	19,2	19,6
մեղր, հազ. տ	89,2	94,7	103,5	108,1	105,7	114,5	107,9

շոր եղջերավոր անասունների քանակով առաջ է անցել ԵՄ բոլոր երկրներից:

ԵՄ երկրներում 2020 թվականին, ընդհանուր առմամբ, եղել է 76 միլիոն 462 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Այս ցուցանիշով առաջատարը Ֆրանսիան էր, որտեղ անցյալ տարի կար 17 մլն 789 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Դրան հաջորդում են Գերմանիան (11 միլիոն 301 հազար), Իսպանիան (6 միլիոն 636 հազար), Իռլանդիան (6 միլիոն 529 հազար), Իտալիան (6 միլիոն 400 հազար): Թուրքիայում նշված ժամանակահատվածում եղել է 18 մլն 158 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

2020 թվականին ԵՄ-ում մանր որոճողների թիվը կազմել է 75 միլիոն գլուխ: Այս ցուցանիշով առաջին տեղը զբաղեցրել է Իսպանիան՝ 15 մլն 439 հազար գլուխ: Դրան հաջորդում են Ռումինիան (10 միլիոն 464 հազար), Հունաստանը (8 միլիոն 260 հազար), Ֆրանսիան (7 միլիոն 301 հազար), Իտալիան (7 միլիոն 34 հազար) և Իռլանդիան (3 միլիոն 877 հազար): Անցած տարվա վերջի դրությամբ Թուրքիայում կար 54 մլն 113 հազար գլուխ մանր եղջերավոր անասուն, որից՝ 42 մլն 127 հազար գլուխ ոչխար: Թուրքիան ոչխարների գլխաքանակով գրեթե երեք անգամ գերազանցել է Իսպանիային՝ եվրոպական աշխարհամասի հիմնական մրցակցին[10]:

Ինչպե՞ս պաշտպանել Հայաստանի շուկան Թուրքիայի տնտեսական էքսպանսիայից

Տնտեսապես հզոր և զարգացած ագրոպարենային համալիր ունեցող նման հարևանը պետք է որ առավելություն լիներ ՀՀ-ի համար: Այո՛, տնտեսական և քաղաքական բնականոն հարաբերությունների պայմաններում գուցե նաև այդպես լիներ: Սակայն, երբ այս երկու երկրների միջև պատմականորեն առկա են ոչ բարեկամական հարաբերություններ, և ակնհայտ հակամարտությունը դեռևս շարունակվում է, Հայաստանը պետք է միջոցներ գտնի Թուրքիայի տնտեսական էքսպանսիայից խուսափելու համար: Ահա թե ինչու՝ հասարակության մեկ հատվածը կարծում է, որ հայ-թուրքական սահմանի բացումն ամենևին էլ շահեկան չէ մեզ համար, իսկ մյուս՝ հատկապես գործարար հատվածը,

[9] http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/export/Documents/%D0%A2%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D1%8F.pdf

[10] https://www.aa.com.tr/ru/%D1%0%B0/2441889

հակառակն է մտածում: Բայց սա խնդրի միայն տնտեսական կողմն է, մինչդեռ ավելի սուր է քաղաքական կողմը, որը, ոմանց համոզմամբ, հասնում է ընդհուպ Հայաստանի պետականությունը կորցնելու վտանգին: Տուրք չտալով ծայրահեղ մոտեցումներին՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է չթերագնահատել սեփական առավելությունները, հետևողականորեն ինտեգրվել քաղաքակիրթ հասարակությունների ու երկրների բանակին և կիրառելով արտաքին առևտրի կարգավորման սակագնային ու ոչ սակագնային նպաստավոր գործիքները, շահեկան առևտրատնտեսական հարաբերություններ ստեղծել բոլոր, հատկապես՝ հարևան երկրների հետ: Փակ սահմանը, որից, ի դեպ, տարիներ շարունակ ինքներս էինք դժգոհում, բնավ էլ շուկայի պաշտպանության լավագույն ձևը չէ: Այդ մասին է վկայում հենց հայ-թուրքական փակ սահմանի տարիների փորձը: Մի՞թե հայտնի չէ, որ թուրքական ապրանքները, լոգիստիկայի որոշակի լրացուցիչ արգելքներ հաղթահարելով ու ճանապարհածախսի ավելացումով, Վրաստանի ու Իրանի տարածքով հասնում էին Հայաստան: Մի՞թե հայտնի չէ, որ ազատ առևտուրը զարգացնում է մրցակցությունը՝ նպաստելով նաև տեխնոլոգիական առաջընթացին: Իհարկե, հայտնի է: Սակայն, ամեն դեպքում, պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա մակարդակը և հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական լարված հարաբերությունները լրջագույն ռիսկեր են պարունակում արևմտյան հարևանի հետ՝ բաց սահման ու ազատ առևտուր ունենալու տեսանկյունից: Հետևաբար՝ ավելի նախընտրելի է զգոնությունը չկորցնել և սկզբնական փուլում նախապատվությունը տալ սահմանային առևտրին, միաժամանակ, խելամտորեն կիրառել ներմուծման ծավալների քվոտավորման, ինչպես նաև բուսասանիտարական նորմերի խստագույն հսկողության քաղաքականություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анализ по доступу сельскохозяйственной продукции, сырья и продовольствия государств – членов ЕАЭС на рынок Турецкой Республики, Москва, 2019 г., ЕЭК, Департамент агропромышленной политики; 34 с.
2. https://regnum.ru/news/economy/3206921.html
3. https://www.worldbank.org/en/country/turkey/overview#1
4. https://www.aa.com.tr/en/economy/turkiye-sees-record-exports-in-2021/2464001
5. https://www.aa.com.tr/ru/%D1%D0%BB-11-/2517641
6. https://www.apk-inform.com/ru/exclusive/opinion/1525353
7. https://www.aa.com.tr/ru/%D1B0/2467847
8. http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/export/Documents/%D0%A2%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D1%8F.pdf
9. https://www.aa.com.tr/ru/%D1%0%B0/2441889

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ ПОТЕНЦИАЛ ТУРЦИИ И ОПАСЕНИЯ АРМЕНИИ РАЗВИВАТЬ СВОБОДНУЮ ТОРГОВЛЮ

Развитие армяно-турецких отношений является одним из самых деликатных и противоречивых вопросов внешней политики Армении. Особенно после сорока четырехдневной войны взгляды армянского общества, в том числе диаспоры, на развитие дипломатических и торговых отношений с Турцией расходятся. Более либеральный и прагматичный сектор считает, что враждебные отношения не вечны, тогда как эмоциональная и консервативная сторона отрицает целесообразность развития отношений с Турцией, предпочитая существование закрытой границы.

Как разорвать этот гордиев узел, какой правильный выбор? Конечно, решение в руках правительства, но какова будет реакция? Какой бы сложной ни была проблема, власти Армении предпринимают практические шаги для ее решения. Эти шаги касаются также открытия армяно-турецкой границы и развития торгово-экономических отношений. Здесь особо подчеркивается опасность экспансии Турцией экономики Армении, особенно аграрного сектора. Правда, последствия открытой грузино-турецкой границы в соседней Грузии, особенно в Аджарии, вызывают тревогу. Однако для того, чтобы иметь более здравое мнение, необходимо изучить конкурентные преимущества соседней страны - ее собственные возможности для равноправной экономической конкуренции. В данной статье рассматривается потенциал аграрного сектора Турции, потенциальные риски Армении в условиях открытых границ и свободной торговли.

Ключевые слова: *открытие границ, аграрный сектор, развитие, двусторонняя торговля, экспансия, конкуренция*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

SECURITY AND CHALLENGES

TURKEY'S AGRICULTURAL POTENTIAL AND ARMENIA'S FEAR TO DEVELOP FREE TRADE

The development of Armenian-Turkish relations is one of the most delicate and controversial issues of Armenia's foreign policy. Especially after the forty-four-day war, the views of the Armenian society, including the diaspora, on the development of diplomatic and trade relations with Turkey diverge. The more liberal and pragmatic sector believes that hostile relations are not eternal, while the emotional and conservative side denies the expediency of developing relations with Turkey, preferring the existence of a closed border.

How to break this Gordian knot, what is the right choice? Of course, the decision is in the hands of the government, but what will be the reaction? No matter how complex the problem is, the Armenian authorities are taking practical steps to solve it. These steps also concern the opening of the Armenian-Turkish border and the development of trade and economic relations. Here, the danger of the expansion of the Armenian economy by Turkey, especially the agricultural sector, is especially emphasized. It is a fact that the consequences of an open Georgian-Turkish border in neighboring Georgia, especially in Adzharia, are alarming. However, in order to have a more sensible opinion, it is necessary to study the competitive advantages of a neighboring country - its own opportunities for equal economic competition. The paper examines the potential of the Turkish agricultural sector, the potential risks of Armenia in the context of open borders and free trade.

Keywords: *opening of borders, agricultural sector, development, bilateral trade, expansion, competition*